ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 46 - Ա

ք.Արտաշատ

«23» դեկտեմբերի 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրը՝

Որոշում եմ՝

1. 2024 թվականի 1-ին եռամսյակում մարզի Արարատ համայնքում իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն:

2. Հաստատել իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրով:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) ապահովել համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հսկողությունը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրությամբ պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով, կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) տեղեկացումը, որը պարունակում է տեղեկություններ հսկողության իրավական հիմքի, հսկողություն իրականացնող համապատասխան աշխատանքային խմբի, պաշտոնատար անձանց կազմի, բնագավառների, նպատակի, ժամկետների մասին.

2) համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն.

3) իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքում կազմված արձանագրությունը, խախտումները վերացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարին ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև հսկողության վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած առարկությունները սահմանված ժամկետում հրապարակել մարզպետի աշխատակազմի ինտերնետային պաշտոնական կայքում:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի 2024թ.

փետրվարի 23-ի

48-Ա որոշման

2024 թվականի 1-ին եռամսյակում Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	*Համայնքի անվանումը*	*Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը*	*Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը*	*Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք*	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	*Անուն, ազգանուն*
1	Արարատ	փետրվարի 28–մարտի 18	ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	ՏԿ ԵՎ ՏԻ հարցերի վարչության պետ *(աշխատանքային խմբի ղեկավար)*	Հովհաննես Ուրֆալյան
			ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	Իրավաբանական բաժնի պետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Հրաչ Դավթյան
			Հողօգտագործման բնագավառ	Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Ոսկան Միսակյան
			Քաղաքաշինության բնագավառ	Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Վահե Բաղդասարյան
			Ֆինանսական բնագավառ	Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Ռաֆիկ Թարվերդյան
			Ֆինանսական բնագավառ	Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Մովսես Մանուկյան

			Առևտրի և ծառայությունների բնագավառ	Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Վարդան Սաֆարյան
			Առևտրի և ծառայությունների բնագավառ	Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի տնտեսագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Նարինե Կարապետյան
			Պաշտպանության բնագավառ	Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ (*աշխատանքային խմբի անդամ)*	Մուրադ Միքայելյան
			Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառ	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի անդամ)	Անահիտ Խուդավերդյան
			Գյուղատնտեսության բնագավառ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ *(աշխատանքային խմբի անդամ)*	Աշոտ Սարգսյան
			Առողջապահության և սոցիալական բնագավառներ	*Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի անդամ)*	Հայկ Բաղալայն
			Առողջապահության և սոցիալական բնագավառներ	*Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի անդամ)*	Աստղիկ Ղազարյան

Восстановимая подпись

X

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: MKRTCHYAN ARTUR 3414870525 Ա. ՄԿՐՏՉՅԱՆ